



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



ԾՆԱԴԵԱՆ ՀԻՄՆՈՐՈՂ ՕՐ

10 ՅՈՒՆԻՄԱՐ 2021

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
Ծանուցումներ	էջ 2

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՒՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
12.18-27

Այն լեռը, որուն մօտեցած էք հիմա, շօշափելի չէ՛ Սինա լեռան պէս, որ կրակով կը վառէր եւ պատուած էր մշուշով, խաւարով ու մրրիկով. ուր փողը կը հնչէր եւ Աստուծոյ պատգամող ձայնը կը լսուէր: Ժողովուրդը որ այդ ձայնը լսեց՝ կ'աղաչէր որ չլսէ զայն կրկին, որովհետեւ սարսափած էր այն հրամանէն՝ որ կ'ըսէր. «Ով որ մօտենայ լեռան, նոյնիսկ անասուն մը, պէտք է քարկոծուելով մեռնի»: Այնքան ահաւոր էր տեսարանը, որ Մովսէս ալ կ'ըսէր. «Զարհուրանքէս կը դողամ»: Դուք, սակայն, մօտեցած էք Սինոն լեռան, կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմին, հրեշտակներու անհամար բանակներուն: Մօտեցած էք երկինքի մէջ արձանագրուած

Մօտեցած էք երկինքի մէջ արձանագրուած Աստուծոյ անդրանիկ գաւակներու ուրախական հաւաքոյթին...

Աստուծոյ անդրանիկ գաւակներու ուրախական հաւաքոյթին. Աստուծոյ, որ բոլորին դատաւորն է, կատարելութեան

հասած արդարներու հոգիներուն, նոր Ուխտի միջնորդին՝ Յիսուսի եւ անոր թափած արիւնին, որ լաւագոյն արդարութիւն մը կը պահանջէ, քան Աբէլի արիւնը: Զգոյշ եղէք, որ չըլլայ թէ մերժէք Աստուծոյ խօսքը լսել, որովհետեւ եթէ անոր հրամանները մարդոց փոխանցող Մովսէսին չհնազանդողները ազատում չունեցան, մենք բնա՛ւ ազատում չենք ունենար՝ եթէ կոնակ դարձնենք Աստուծոյ, որ երկինքէն կը խօսի մեզի: Անոր ձայնը երկիրը շարժեց այն ատեն, իսկ հիմա կը մնայ իր խոստումը, որ կ'ըսէ. «Անգամ մը եւս պիտի շարժեմ. եւ ոչ միայն երկիրը, այլ՝ երկինքն ալ»: «Անգամ մը եւս» խօսքը ցոյց կու տայ, որ ստեղծագործութեան մէջ խախտած բաները պիտի փոխուին, մինչ անշարժ մնացածները անփոփոխ պիտի մնան:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
1.39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ.
- Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է գաւակը որ կը կրես որովայնիդ

Երանի՛ր
քեզի որ
հաւատացիր...

մէջ: Ի՛նչ երջանկութիւն,
որ Տիրոջս մայրը ինձի
կ'այցելէ. որովհետեւ
երբ ողջոյնդ լսեցի,
երեսաս ուրախութեամբ

չարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ր քեզի որ
հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ
քեզի ըստածները պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ.

«Տէրը պիտի գովաբանեմ.

Ահա հոգիս կ'ուրախանայ

Աստուծով, իմ Փրկիչովս,

որովհետեւ ան տեսաւ

իր աղախինին հեզութիւնը:

Ասկէ ետք բոլոր

սերունդները

երանի պիտի տան ինձի,

քանի հզօրն Աստուած ինձի համար

մեծամեծ գործեր կատարեց.

սուրբ է անունը անոր:

Բոլոր ժամանակներուն մէջ

ողորմութեամբ ան կը նայի

աստուածավախ մարդոց վրայ:

Իր բազուկով ան զօրութիւն ցոյց
տուաւ,

ոչնչացուց հպարտները՝

իրենց բոլոր խորհուրդներով:

Գահազրկեց արքաները

եւ բարձրացուց խոնարհները:

Անօթիները բարիքներով լիացուց,

մինչ հարուստները դատարկաձեռն

արձակեց:

Պաշտպան եղաւ իր ծառային՝

Իսրայէլի,

հաւատարիմ մնալով իր ողորմութեան,

ինչպէս որ խոստացած էր մեր

հայրերուն՝

Աբրահամի եւ անոր զաւակներուն»:

Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք
ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

... սուրբ
է անունը
անոր:

Այժեւե՛՛ք
ԵԿԵՂԵՑԻՅԱ
ՌԻՎԱՏԵՏՐԻ ԷՁՆ

ԵՒ

ՁԵՐ ՀԱԻԱՆՈՒԹԻՒՆԸ
յԱՅՏԱԵՑԷՔ (like).

[www.facebook.com/
SourpHagopChurch-
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

Այժեւե՛՛ք ԱՁԵՒ

Ս. ՅԱԿՈՒՔ

ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅԱ

ԿԱՅԷՁՆ՝

www.sourphagop.net

ԹԵՐԹԻԿԻ ԱՆՆՈՐԴ ԹԻԲԵՐՆ

ԿՐԱՔ ՊՏԱԵԼ

www.sourphagop.net

ԿԱՅԷՁԻՆ ՎՐԱՅ

ՀՈԳԵՀԱՆՊԱՏԵԱՆ

ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

ԱՆՆՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՑԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ

ԵԿԵՂԵՑԻՅԱ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ: